ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԷԿՈԼՈԳԱՆՈՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆ

THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
THE CENTER FOR ECOLOGICAL-NOOSPHERE STUDIES
A STATE NON-COMMERCIAL ORGANIZATION
DIRECTOR

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ЦЕНТР ЭКОЛОГО-НООСФЕРНЫХ ИССЛЕДОВАНИЙ
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
ДИРЕКТОР

0025 Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Աբովյան փ.68
E-mail: ecocentr@sci.am eco-centr@rambler.ru
Հեռ. (+374-10) 57 29 24
Ֆաքս (+374-10) 57 29 38

Abovian str. - 68, Yerevan
Republic of Armenia 0025
E-mail: ecocentr@sci.am eco-centr@rambler.ru
Phone: (+374-10) 57 29 24
Fax: (+374-10) 57 29 38

0025 Республика Армения, г. Ереван, ул. Абовяна, 68
E-mail: ecocentr@sci.am eco-centr@rambler.ru
Тел: (+374-10) 57 29 24
Факс: (+374-10) 57 29 38

N 99-րf

25. 06 2014 թ.

Հասցե՝ ք. Երևան, Աբովյան 68

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված համապատասխանաբար ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-**1**-ից ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-**126** շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի ծածկագիրն է՝ < Էկոկենտրոն-ՇՀԱՊՁԲ-11/1-**14/6**>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Աբովյան 68, 3-րդ հարկ հասցեով, Նարինե Հայրապետյանին, մինչև **2014թ. հուլիսի 7-ի ժամը 10:00-ը**:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Աբովյան 68, 3-րդ հարկ հասցեում, **2014թ. հուլիսի 7-ին ժամը 10:00-ին:**

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Ա.Սաղաթելյան

Կատարող՝ Ն.Հայրապետյան
Հեռ. 095-51-52-70

Էկոկենտրոն-ՇՀԱՊՁԲ-11/1-**14/6** ծածկագրով
Շրջանակային համաձայնագրի հրավերի

ԲԵՆԶԻՆԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Երևան **<<-------->>-հուլիս--2014թ.**

<<---------->> ընկերությունը, ի դեմս տնօրեն ----------ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար), մի կողմից, և ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Սաղաթելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել՝ սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված ռեգուլյար տեսակի բենզին այսուհետ՝ Ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Մատակարարն Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված ծավալներով և ժամկետներում: Ապրանքը մատակարարվում և բեռնաթափվում է վաճառողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Աբովյան փողոց 68 հասցեում: Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի 2014թ-ի ընթացքում, ըստ գնորդի պահանջի 1 աշխատանքային օրվա ընթացքում: Մատակարարման ձևը պետք է լինի կտրոնային: Հայտ ներկայացրած մասնակիցը պետք է լցակայաններ ունենա հանրապետության նախկին շրջկենտրոններում և ԼՂՀ տարածքում (ներկայացնել հասցեները հայտի հետ միաժամանակ):

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը թիվ 2 հավելվածով սահմանված ամսում Մատակարարի կողմից մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից,

3.1.2 Եթե տրամադրվել է սույն պայմանագրի պայմաններին չհամապատասխանող որակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել հատուցել Ապրանքի անորակ լինելու պատճառով իր կողմից կրած վնասները,

բ) չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելովողջամիտ ժամկետ սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինելու համար, պահանջել Մատակարարից վճարել սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Եթե հանձնվել է թիվ 2 հավելվածով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով:

3.1.5 Մատակարարի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը,

3.1.6 Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն սույն պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է սույն պայմանագրի պայմանները՝

3.1.7.1 Մատակարարի կողմից պայմանագրի պայմանների խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները.

3.1.8 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

3.2 Գնորդը պարտավոր է,

3.2.1 կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները,

3.2.2 Մատակարարի կողմից հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին,

3.2.3 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց անմիջապես հետո կամ որոշակի ողջամիտ ժամկետում, եթե պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.4 Սույն պայմանագրի 3.3.3 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Մատակարարին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Մատակարարն իրավունք ունի,

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը,

3.3.2 Գնորդից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,

3.3.3 միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագրի պայմանները՝

3.3.3.1. Գնորդի կողմից պայմանագրի պայմանների խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարման ժամկետները:

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Մատակարարը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքի կտրոնները՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում,

3.4.2 Ապահովել կտրոնով Ապրանքի ստանալը իր ԲԼԿ սույն պայմանագրին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում,

3.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք,

3.4.4 Գնորդին հանձնել սույն պայմանագրի թիվ 1 և 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,

3.4.5 առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը,

3.4.6 հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատարարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը,

3.4.7 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,

3.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը,

3.4.9 սույն պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները,

3.4.10 Իր մոտ ապահովել կտրոնում նշված ծավալի Ապրանքի առկայությունը՝ մատակարարման փուլերին համապատասխան քանակի չափով:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1Սույն պայմանագրի գինը կազմում է ---------- /----------/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2Սույն պայմանագրով մատակարարման ենթակա Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը, ներառյալ ԱԱՀ, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածում:

4.3Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն համաձայնագրով:

4.4Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.5Վճարումը կատարվում է սույն պայմանագրի 6 կետում նշված հաշիվ-ապրանքագիրն երկկողմանի ստորագրելուց հետո՝ 3 բանկային օրվա ընթացքում:

5. Ապրանքի որակը

Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

6.2 Մատակարարն Ապրանքի կտրոնները հանձնելիս Գնորդին է ներկայացնում հանձնված կտրոնների մասին իր կողմից ստորագրված հաշիվ-ապրանքագրի երկուական օրինակ:

6.3 Գնորդը՝ հաշիվ-ապրանքագիրը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հաշիվ-ապրանքագրի մեկական օրինակը կամ հաշիվ- ապրանքագիրը չստորագրելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում ԲԼԿ-ի ցանցից կտրոնով ապրանքը ստանալուն հաջորդող մեկ ժամվա ընթացքում՝ վատ որակի վերաբերյալ բողոք չներկայացնելու պահից:

6.5 Բողոքը համարվում է ներկայացված, եթե առկա է գրավոր բողոք կամ Գնորդի կողմից Մատակարարի պատասխանատու անձանց՝ վատ որակի վերաբերյալ տեղեկացման ձայնագրությունը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և սույն պայմանագրի համար մինչև **ս.թ. օգոստոսի 15-ը**:

7.2 Մատակարարի կողմից սույն պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների խախտման դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ սահմանված

ժամկետում չմատակարարված ապրանքի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարներից:

7.4 Սույն պայմանագրով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող

Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ Ապրանքի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը <ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ>

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ.

2) Վաճառողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2, հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն> ՊՈԱԿ	
Հասցեն՝ Ք. Երևան, Աբովյան 68	
Բանկը՝ Անելիք բանկ, Կենտրոնական մ/ճ	
Հ/Հ 11805100241800	
ՀՎՀՀ 01506627	
----------Ա. Սասղաթելյան	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

2014թ. N _____

Բենզինի մատակարարման Գնման պայմանագրի

Մատակարարման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագիրը

Չափա-բաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	2014թ. համար գնման ենթակա քանակը	Միավորի գինը ՀՀ դրամով	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամով	Գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ հատկանիշները
1	Բենզին ռեգուլյար	լիտր	500			Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5մգ/դմ^3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1%-ից ոչ ավելի, խտությունը 15^{0}C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C5 և ավելի)-15% այլ օքսիդիչներ-10%, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ նոյեմբերի 11-ի N1592-Ն որոշմամբ հաստատված <Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի>

ԳՆՈՐԴ

<ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն> ՊՈԱԿ
Հասցեն՝ Ք. Երևան, Աբովյան 68
Բանկը՝ Անելիք բանկ, Կենտրոնական մ/ճ
Հ/Հ 11805100241800
ՀՎՀՀ 01506627

----------Ա. Սասղաթելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

(ստորագրություն)
Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

214թ. N _____

Բենզինի մատակարարման Գնման պայմանագրի

Մատակարարման ենթակա ապրանքների գները և մատակարարման ժամանակացույցը

Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Մատակարարման փուլերը	Մատակարարվող ապրանքի քանակը	Մատակարարման եղանակը	Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը /ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ
Բենզին Ռեգուլյար	լիտր	հուլիս	500	10 հատ 10լ. կտրոնով 20հատ 20լ. կտրոնով		
ÀÝ¹³ Ù»ÝÁ			500			

ԳՆՈՐԴ

<ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային
հետազոտությունների կենտրոն> ՊՈԱԿ
Հասցեն՝ Ք. Երևան, Աբովյան 68
Բանկը՝ Անելիք բանկ, Կենտրոնական մ/ճ
Հ/Հ 11805100241800
ՀՎՀՀ 01506627

----------Ա. Սասղաթելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

_____
(ստորագրություն)
Կ.Տ.